

ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և նոր գրիկ
խմբագրության հասցիքն.

—
Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна.

—
Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie).

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար սարե-
կան 10 ֆրանկ. վեցան-
սեայ 5 ֆրանկ: Արսասահ-
մանի համար սարեկան 12
ֆրանկ, վեցանսեայ 6 ֆր.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
Կրուքիակի ևս չեն տուիր:
Իրանուցեան տոյր 20 սան-
թիւ հ:


ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ


ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Իրաւ կրօնական ազգ եւի, Շա-
ւասայ. — Աղ քֆ (ֆերրուսօ), Վահան
Մանուկեան. — Արձազակ, Կաւեր-
Արշաւիր. — Մսֆի յեղայտիտրիւնը,
Վարդօ. — Փախսահակն յիշատակա-
րան, Շաւարշ. — Ֆիլիպի (վեր մաս-
նաւոր քրիստոնէի), * * *. — Շուշու,
Օ. Բ. — Հանդիսներ. — Կալաֆա-
կան դիպիւր. — Տաճկերէն մաս:

ԻՐԱՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԳ ԵՆԻՔ



Չէ կարելի գտնել հայ մը, որ քիչ
ու շատ մտքի լոյս ունենայ, սրտի
կծկուցներէ վեր ըլլայ, ու սա մտա-
ծուհիները չընէ ինքնին, թէ ի՞նչ
յանցանք խեղճ ժողովուրդին. աղ-
գութեան ու մարդկութեան իբրեւ
նշանաբան միայն եկեղեցի մը կը
գտնեն, կարծելով թէ ամէն բան է
ատրիակ: Այսպէս կը ստիպենք որ
մարդկութիւն մը, հոգիով, սրտով ու
մտքով ծայրատուած, ամէն օր իշխայ
քարերու, պատկերներու եւ մոմերու
առջեւ ետաւսի աղօթքներով:

Եւ այդ մարդը պիտի լսէ յաճախ
իր բոլորտիքը, անընդհատ շարու-
նակուող ազդակներ, ճանձի բըզ-
զանքներու պէս, թէ Հայը կրօնա-
կան ազգ է. ուրիշներու համար կըր-
նայ ասորեք ըլլալ, բայց մեզի հա-
մար ճշմարտութիւն է լեռանը տակ
ցցուած ապառաժին պէս: — Ի՞նչ ը-
սել է «Կրօնական Ազգ». այսինքն
թէ այդ ազգը կրօնքէ զատ ոչինչ
ունեցած է եւ ոչինչ ունի. պատմու-
թիւն, անձնանուիրութիւն, հայրե-
նիք, տուն, տնական պատիւ, ցե-
ղային բնազդներ, ամէն ալ ոչինչ,
ոչինչ: Ասիկա դաւ մըն է եղած Հա-
յոց պատմական կեանքին մէջ, որ
Պոլսի հայութեան ազեղաւոր փորը
ծնաւ, եւ շատ բնականօրէն, վասն
զի գաղթական հայութիւնը, մէկ
սերունդ ետքը, երբ տեսաւ թէ ալ
իր բոլորտիքը բան չկայ իբրեւ
հայրենիքի յիշատակ, առ առաւելն
աչքին առջեւ հայրենիքէն բերուած
խաչեր, կրօնական գիրքերու գեղին
ու բորբոսած մագաղաթի կտորներ,
խորհելու պէս բան մը ըրաւ իր
մտքին մէջ, ազգային բան չգտաւ,
սիրտը հայրենիքի սէրէ զարտակ
զկաց. ուստի յղացաւ ու վճռեց կամ
վիճեց թէ Հայը կրօնական Ազգ է:

Ճշմարտ է թէ ամէն հայ մարդ
ինքզինքը կրօնամուլ ըլլալու չափ
կրօնասէր կը դաւանի, բայց ասիկա
խոստովանութիւն մըն է, որուն

անկեղծութիւնը, կամայ ակամայ,
կրօնամուլ տակ է: Հայոց մէջ այն-
քան կրօնք կայ, որչափ կաթ ամուլ
ստինքի մը մէջ: Ճամբայ ելիր ո՞ր
փողոցէն. որ կուզես, եւ բռնէ որ
Հայու օձիքէն որ կուզես, ու հար-
ցուր թէ ի՞նչ է ունեցած կրօնքը:
Բնաւ տարակոյս մի՞ ունենար թէ
ամենքն ալ Չաքարիայի պէս պիտի
գտնես, եւ գուցէ հոգեւորականներ
ալ, եւ նոյն իսկ անոնք՝ որ մեզի
քարոզիչ կը հանդիսանան փարիսե-
ցիի կեղծաւորութեամբ թէ Հայը
կրօնական ազգ է, մեզի համար կը-
րօնքը ամէն բան է:

Եւ շարժեցէք ու տեսէք թէ այդ
ճշմարտութիւնը մեզի կը քարոզուի
եկեղեցիներէ շրջափակին մէջ, կամ
փարիսայեան մըն է ճարտարախօսը եւ
կամ գլխաւոր մարդ մը, որոնք եր-
կուքն ալ, տակաւին օրեր առաջ,
շատ հեռու էին այդ ճշմարտութենէն,
բայց մէկուէ փրկուողով, միւսին
ալ աչքերը կապեցի՞ր եկեղեցիին
պնակներուն մէջ նստուած մետաղի
աղտոտ կտորներուն, հետեւեալ օրե-
րը քեզի այդ խոշոր ճշմարտութեանը
քարոզիչ են: Ու ի՞նչ ալ պարկեշտ
մարդիկ են, Աստուած իմ, մէկը նոր
հարսի պէս մարդու երես նայելու չի
համարձակիր, իսկ միւսը սրբուած
բոլոր մարդկային մեղքերէ, Պրոպա-
տիկէ աւազանէն նոր դուրս ելածի
պէս, հրաշալի արարած մըն է զբար-
րօցէն մինչեւ եկեղեցիին սեղանը:

Այդպէս պէտք չէ ըլլայ. ու ճըշ-
դենք այդ սխալը, որ անպիտակցօ-
րէն կը կրկնուի. եւ վարպետ ու
խորամանկ հոգիներու վրայ փարի-
սեցիի գիմակ մըն է ներքին ազտե-
ղութիւններ ու փտութիւններ վա-
րագուրելու. ճշդենք այդ պատմա-
կան սխալը ու ըսենք թէ Հայը
իբրեւ պատմական ազգ, ապրեցաւ
իր ցեղային բնազդներովը, կամաւ
տարաւ իր պատմական կեանքին
բոլոր շարժարանքները, զէնքին ու
խաչին միեւնոյն խանդաղատանքով
նայեցաւ, ու Մաղքոսի ականջը
կտրելու թողաւութիւն չընող Քը-
րիստոսի գինակիր Հայ եկեղեցակա-
նը, Մեծն Ներսէս իր հայրապետա-
կան օրհնութիւններովը Մուշեղ զօ-
րավարին զէնքերը կօրհնէր որ. ուր
եւ հատու ըլլան. Գեւորդ, Վարդա-
նանց խլրտուցներէն առաջ, ապրա-
տամբութեան առաջին խանձողները
նետեց ամբոխին մէջ. Յով. Ման-
դակունի վահան Մամիկոնեանի կը
մասնակցէր՝ անոր բոլոր արշաւանք-
ներուն մէջ, վերք կառնէր իր ծե-
րուկ հասակին մէջ, եւ ինքն էր որ
Հայոց տաճարները՝ յաղթանակնե-
րու հանդիսավայր կընէր. Գիւտ կա-
թուղիկոս այնպէս սուր եւ խայթող

լեզուով կը ծակծկէր հայրենիքի
մատնիչները, դաւաճանները, որոնք
սարսափահար, գփուարաւ իրենց
չունչը կառնէին արքայից արքային
ապարանքները: Այնպէս շարունակ-
ուած է Հայոց մէջ կրօնքը. ու Հայ
հոգեւորականութեան լաւ ներկայա-
ցուցիչները աշխարհական ըմբռնու-
մով այսպէս շարունակեցին իրենց եր-
կինքի գինուորութիւնը մինչեւ թո-
րոս Բ. ի հիւրնկալ քահանան, մինչեւ
Ներսէս Աշտարակեցի ու Ներսէս
Վարժապետեան:

Ճշդենք այդ սխալը ու ըսենք թէ
կրօնքը մեր ազգային սեփականու-
թիւններէն մէկն է, Հայը անոր
տէրն եղած է ու սուած է անոր փո-
խարէն ինչ որ կուտայ թանկագին
կալուած մը գնելու համար: Բան
մըն է ան մեզի համար, բայց ո՞չ
ամէն բան. արգելք մը չկայ ըսելու
թէ ամէն հոգի որ կըզգայ թէ անոր
մէջ հեշտանքներ ունի, երկնքի
հրճուանքներ ու հոգեկան թրթիւ-
ներ, ազատ է անոր մէջ: Ու հաս-
տատապէս թող համոզուին փարիսե-
ցիները, թէ վերջին զոհողութիւն-
ները զանձնասիրութիւնները, կամա-
ւորաբար յանձն առած խոշտան-
գանքները, կրօնքի տեսակետով մեր
ամենէն թույլ օրերուն մէջ տեղի ու-
նեցան. ու Հայը ամենէն լաւ Հայ
կեանքը ունեցաւ հայրենիքի ու աղ-
գի համար. Ոչ, Հայը կրօնական ազգ
չէ, Հայը՝ Հայրենիքի, Ազգի, Ըն-
տանիքի ու Պատիւի Հայ է, ու միշտ
մեր պատմութեան մէջ ամենէն լաւ
հոգեւորականներ հոչակուած են ա-
նոնք որ խաչին տակ օրհնեալ սուրբ
գրին, եւ խուսկի ծուխերուն մէջ՝
վաստօրի մուխէն շարժեցան:

Հայոց պատմութիւնը, մեր ապրած
կեանքը, Հայոց ամենէն լաւ ու
ժողովրդական հոգեւորականները՝
ճղնաւորներ չէին: Ու երբ տեսնէք
որ տակաւին երկէ չէ առջի օր սը-
նանկ հոգի մը, զարտակ սիրտ մը՝
երկու օր ետքը կուզայ վարդապետի
վեղարով, կամ գլխաւոր պաշտօնով
ձեզի քարոզելու թէ մենք տակաւին
կրօնական ազգ ենք, գիտցէք թէ լեզ-
ուին տակ ուրիշ բան մը կայ. իր
փորին անօթութիւնը, որ քարայրի
մը պէս արձագանգ կուտայ. եւ
վճռեցէք թէ փարիսեցի մըն է:

ՇԱՐՋՈՒՄ

ԱՐՁԱԳԱՆԳ

Գիտական աշխարհը վերջերս
բեղուն օրեր անցուց: Նորանոր
գիւտեր հասան զայն ա՛լ աւելի
ճոխացնելու:

Բայց մենք անոնցմէ ամենէն
գիւրամարտելիները պիտի ընտ-
րենք, առողջաբանութեան դէմ
չի մեղանչելու համար:

Առաջինն է Տօքթ. Նիկոլինը.
այսինքն՝ արջառային ժանտի
միքրոպին գիւտը: Բայց թերեւս
հարցնէք թէ ատրիկայ ի՞նչ կըր-
պով կրնայ մեզի շահագրգռել,
քանի որ քուրտը արդէն շատոնց
ազատած է հայ գիւղացին ար-
ջառներու հոգէն: Իրաւունք ու-
նիք: Եւ սակայն հաճեցէք ու-
շաղրութիւն դարձնել սա անա-
կընկալ պարագային, որ խնդիրը
տեղի ունեցած է Սուլթաններու
մայրաքաղաքին մէջ:

Ի՞նչ նորութիւն Պոլսոյ հա-
մար: Չարմանալի չէ՞ որ մարդ Պոլ-
սոյ մէջ ապրի և հոն՝ միքրոպ
սպաննելու ետեւէ ըլլայ, երբ
ոսկորէ և միտէ շինուած ճշմա-
րիտ մարդիկներ խողովակներ
աշխարհ հեշտ գործ է:

Այսօր Տաճկաստանի մէջ, յե-
տին թուրքը և քուրտը անգամ
լաւ «օրէնաթէօն»ներ են: Մար-
դակազմութիւնը գաղտնիք չունի
անոնց համար: Բոլորովին ժո-
ղովրդականացած է: Փողոցի քա-
րերուն անգամ հարցնէք, պիտի
պատմեն ձեզ մարդկային արեան
քիմիական բաղադրութիւնը:
Թուրքիոյ պատիւն է այս գիտա-
կան վիթխարի յառաջգիմութիւ-
նը: Եւ մտածել թէ Ֆրանսացի
բժիշկ մը, Նիկոլ մը, իր գիւ-
տերովը յանդգնի այդ անհուն
սպանդանոցը վտիտ «լապոնա-
թօն»ի վերածել: Ի՞նչ անկուս-
ե՛տ առնելու է Նիկոլի պատուա-
նշանները:

Երկրորդ գիւտն ալ կը բխի
Տօքթ. Շէքսէն որ խելքը միտքը
տուեր է ըստ կամս արու կամ էգ
զաւակներ ծնելու հարցին:
Գաղտնիքը կը կայանայ մօր
տրուելիք ուտելիքներուն վրայ:
Այսպէս օրինակի համար հիւթեղ
պիւֆթէք մը թոմպուլիկ մանչ
մը պիտի արտադրէ, իսկ պնակ
մը լուրիան նազելի կուսիկ մը:
Սոսկալի բան: Կերեւակայէք
թէ ի՞նչ ահուկ յեղաշրջում ա-

ուսմը բերելու սահմանում է այս գիւտ, եթէ երբեք իրականանայ Վայրկեան մը իսկ մի տարակուսիք թէ կծծի ծնողները, գրամօժիտի հոգեբէ մի անգամ ընդ միշտ ազատելու համար, իրենց բանգործ պիտի ընեն սասմոքսային պահանջները այնպէս մը կարգադրել, որ եւայի գողտրիկ յաջորդները յաւէտ չերեւան լոյս աշխարհի մէջ: Այլ մնաք բարով երկար վարտեր, վարդչուրթեր, գիրք այտեր, երկնաժպիտ աշուկներ, Տօքթ. Շէքսք այսպէս կուզէ. թող չի տար որ ձեզ ձեռնու ահմանումները պիւթթէք ուտին, այլ լուրիա կը հրամայէ սնունդ. և անոնք կը հնազանդին. ոչ թէ ձեզի չի սիրելնուն՝ այլ մահու չափ ատելնուն համար այն օժիտապաշտ միւսիւնները, որոնք քիչ անգամ կը յօժարին աման ծախել իրենց թանկագին անձը:

Տեսաք հիմա, միւսիւններ, վերջապէս այնքան առաջ դացիք ու յաւակնոտ դարձաք, որ նախախնամութիւնը ձեզի պատժելու պատրաստութիւն կը տեսնէ տօքթօրի մը ձեռքով:

Մի ըլլալ:

Այլ ձեր ամէն քայլափոխին չի պիտի հանդիպիք այն արարածներուն, որոնք վարդեն են աշխարհի: Հազուադէպ պիտի ըլլան անոնք և հազիւ պիտի բաւեն արքայական պալատները ոգեւորելու:

Եւ յայտնի անիրաւութիւնը հոն է որ չպագայ սերունդն է որ պիտի քաւէ մեր մեղքերը. սերունդ մը որ անէծքներ ունի վերապահած թէ մեզ և թէ մանաւանդ սա այնքան անդադուաբար մեր ներքին գործերուն խառնուող Շէքսի յիշատակին:

Ազկէց շատ աւելի սիրուն յիշատակ մը վերապահուած է ամէն անոնց որ Պոլսոյ բարեգործական Պաշարը այցելեն: Փութացէք երթալ. . . երբ որ աֆֆը շահանէ ըլլայ: Ձեզ պիտի տան գոյնզգոյն թաշկինակ մը բոլորովին մուսթաֆայական ճաշակով հիւսուած: Այդ ճաշակաւոր մէնտիլին վրայ գրուած են սա հանճարեղ արարելէն բառերը. «Մալուլին վէ կուզաթը ասաքերի իեանէ սերկիսի խատիկեանը» որոնց ինչ նշանակելը եթէ գիտեմ արապ ըլլամ:

Բայց, թէեւ չեմ հասկնար և սակայն հասկցողի պէս որոտընդոստ կը ծափահարեմ: Կը ծափահարեմ նաև Տօքթ. Նիկոլի գիւտին որ եթէ ոչ մեզ՝ գէթ ուրիշներու բարիք է. և Տօքթ. Շէքսի՝ որ ընդհանուրին համար ազէտ է: Եւ ի՞նչպէս կրնամ անտարբեր մնալ առանց ձեռքերս խնդի պէս իրար վարենլու, երբ հայ մըն եմ և երբ մեր մէջ արմատացած սովորութիւն

դարձած է ամէն իմանալի կամ անիմանալի, գեղեցիկ կամ տրգեղ, իմաստուն կամ խմար, վերջապէս զիրար արամազծօրէն հակասող եղբայրութիւնները համահաւասար ուժգնութեամբ ծափել:

ԿԱՐԵՐ-ԱՐՇԱԻՐ

Ա Ղ Օ Թ Ք

Ձե, sk'r, չի իսպառ ալ մեզի մոռցար:

Եւ յոյս երեսեղ ձգեցիր իրաւ, Ու քոյ տուիր որ ինկած սարե սար, Թախաթի հայր անօթի, ծարաւ:

Ձեմ գիտեր ի՞նչ մեծ գործեցիմք ուիր, Կաւ գեղեցեանք ինչո՞ւ մե՞ք պակաս, Որ դուև հայերու կտրեցիր վնիւ, Բնաւ չի շուած կրե՞լ պատուհաս:

Արդ՞օք քեզի քիչ չի եցեցիմք ռաւար, Ի՞նչ աղօթեցիմք քեզի ձեր աղիւ, Բնաւ, զատուան ի՞նչ եղաւ պատուատ, Բուրվաթի պակաս, քե պակսի խղիւցիր:

Հայր սկիզբէն միշտ եղաւ հիշ Մրազան կաւիկի, ով անգուք Ասուած,

Մեմ չեմ կարծեր որ դժբախտ րչալու Արժանի մեղք մը րչալիմք գործած:

Հայաստանի պէս ուրիշ երկիր կա՞յ, Եթե՞լ վանեցե՞րով, խաչե՞րով չեցուև, Ո՞ր ազգ մեզի չափ տուած է վկայ, Անուանի հաւար քափեղով արիւն:

Կաւ քի յանցանք մը գործեցիմք երբեք, Միքե այսպիսի կը վայրի հարուած, Ձե մի որ մեմ ալ մտորիկներ եմք հեք, Իսկ դուև Ասուած մը արդար, ոչ դո՞ւմա՞ծ:

Աղօթելով շատ սպասեցիմք գուր Թե շուտ օգնութեան պիտի գաս, ով Տե՛ր, Ու անա քուրիս հրազանն ու սուր, Մեր արիւններէն փազոցեցիմք զեներ:

Ձե, Տե, չի՛ իրաւ ալ մեզի մոռցար, Եւ յոյս երեսեղ ձգեցիր իսպառ, Ու քոյ տուիր որ ինկած սարե սար, Անխնայ մեղքի հայր շարաշար:

ՎԱՆԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ 16 Փետր. 1898

ՍՏՔԻ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

Մարդկութիւնը անթիւ դարեր անցնելով, բերաւ որ սերնդեր ոչնչացնելով վերջապէս եկել է հասել ներկայ մտաւոր և բարոյական զարգացման բարձր աստիճանին: Որչափ մեծ փոփոխութիւն. երբեմն անտառներում անասունի պէս ապրող մարդը իր խելքի ուժով հասել է այն վիճակին որ ամբողջովին փոխել է մարդկութիւնը և աշխարհը: Ծով ու ցամաք, կրակ և ուրիշ բնական ուժեր ու տարրեր իր ձեռքում խողալիք զարձրած զեկալարում է իր փոքրիկ խելքով և նրանց ծառայեցնում իր բազմազան պէտքերի և բաւականութիւնների համար:

Արագաթոյն մտքով միայն կարելի է երևակայել թէ մարդկութիւնը որչափ ճիշդ կամքի ուժ է խելքէ թափել ներկայ վիճակին հասնելու համար ու որչափ հանճարեղ եւ ազնուագոյն զաւակներ է զոնել . . .

Նախաճրեկեղեղեան ժամանակներից սկսած մարդկային խելքը կուել է թէ բնութեան խոշնդոսների գէմ և թէ իր պահպանողական ու խաւարամիտ եղբայրների գէմ՝ իր մեծ նպատակներին հասնելու համար: Եւ գուցէ բնութեան խոշնդոսները, լեռ ու ծայս, ծով ու գետ և ոչ մի ստեղծելի ուժ ու տարր այնքան չեն տանջել ու չարչարել խելացի եւ առաջադիմական մարդուն, որչափ մարդկութեան պահպանողական մասը . . .

Առաջադիմական տարրի ներկայացուցիչ հանճարները, որոնք թէ հին և թէ նոր ժամանակներում կուել են մղել հնութեան, անչարժութեան, ծուլութեան ու անիրաւութեան գէմ և միջոցներ գտել մարդկային մտածողութեան սահմանը այնքան լայնացնել, որ մարդս կարողանայ թափանցել բնութեան գաղտնիքների մէջ, իրանց ժամանակակիցների մէջ բարձրացրել են մտքի առաջին յեղափոխութիւն, խորտակել են այդ միաքը կաշկանդող կապերը և ձգտել մարդին աւելի բարձր և իրան արժանավայել վիճակին հասցնելու:

Սակայն ծանր է եղել այդ լուսաւորութեան առաջնորդների վիճակը: Նրանք մէկով, երկուսով կուել են մղել միապետների, իշխանների և հոգեւորականների գէմ, կուել են եւ այդ բոլորից հալածվել, տանջվել ու չարչարվել:

Աշխարհի սկզբից մինչեւ հիմա լոյսի և զուտ բարոյականութեան հակառակ՝ ազէտ պահպանողական տարրը, զազանի կատաղութեամբ, փրփուրը բերանին կուել է մաքի ու բարոյականութեան զինուորների գէմ և խաւարամիտ ամբոխի օգնութեամբ հալածել նրանց:

Սովորաւ, Գալիլէյ, Սուանարօ, Օհան Նուս, Լոււէր, Վօլթեր, Բուսօ, Դարվին և Կոպէրնիկ ու ամենաստեղծները—մարդկութեան Փրկիչը Բրիտոս հալածվել են այդ կեղծաւոր փարիսեցիների ձեռքով:

Սակայն մտքի յեղափոխիչները կատարել են իրանց դերը, տանջվել են, խաչվել են, անարգվել են, այրվել են, բայց և այնպէս բոցավառ լոյսի ճաճանչները ցոլացրել են մարդկային խաւար մտքի մէջ և սղէտ մարդկութեան կեանքի փշտ ու տատանվոտ ճանապարհը հարթել: Փառք և պաշտամունք այդ վիթխարի հակառիկներին որոնք իրանց կեանքով և իրանց խելքով շարունակ շարժել են, յեղափոխել են մարդկային միտքը, և վերակազմել են աշխարհը ու մարդկային կեանքը:

ՎԱՐԴՈ

ՓԱԽՍԱԿԱՆԻ ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆ

ՀԱՍՊԳԵՂԻ ԿՈՏՈՐԱՐԷ:

—)(— (3)

Հրեաները, խառն կատաղի քերտերու և թուրքերու հետ, ներս նետուած էին մեր ապաստանած տունէն. ոչ ոք տեսնելով իրանց գիմացը որ սպանէին, սկսան ջախջախել ինչ որ գտան: Մեր գլխուն վերեւ կզգայինք տպաւորութիւն այն ազմուկին որ առաջ կուգայ երբ փրփուր հոս սահանք մը իր գունը խոր-

տակէ ու վազէ ցից աւելինքէ վար: Շարունակական բախում մը եւ քայքայում մը, որ ցնորական բանգագուշանքի մը պէս կը թմրեցնէր մեր ուղեղները, հէք զողանար ապաստանածներս, մութին մէջ, անչնունչ, կեանքի ծայրայեղութեան վրայ, իրողութիւնը՝ իր անաւորութեանը մէջ երազ մը թուելով մեզ:

Եղածը, մեր գլխուն վրայ գուռացածը, պարզ կողոպուտ մը չէր. վայրագ քանդում մը որ տանը կատարէն ըսկըսած մինչեւ հիւթերը կը սարսածուէր, այն ցնցումը զոր հական կուտայ իր արմատէն բռնած ու երկրցուցած մատող ծառին: Մութը շարացում մըն էր բոլորաթիքս, բիւրբոս խաւարին մէջ լոյսի աղօսներ կը շիրտաւորէին, տարտամութիւնով մը զգացումի ու անզգացութեան մէջտեղ, կեանքի և մահուան տարօրինակ անգիտակցութեամբ մը համակուած, ձեռքիս մէջ պրկելով դաշոյնին կոթը. ու ինձի այնպէս կուգար թէ մէկ թափով քսան հատ հրէական կուրծք պիտի կրնայի ծակել:

Յանկարծ հրէշային հոտանքը վար վազեց տան սանդուխտներէն. ու վայրկեան մը շանցած երկաթէ սղորմիլի դուս մը միայն կը բաժնէր մեզ արիւնարբու զազաններու մոլուցքէն, որոնք ամէն բան կը խորտակէին մեր քովը, մէկ քայլ անդին, ամէնէն սոսկալի նախատինքները տեղալով անոնց գէմ որ խոյս տուած էին փոխանակ հոն մնալու և աննպատակ վէճի մը առարկան դառնալու այդ աւերիչ տարրին:

Տասնեւհինգ սարսափահար էակներ մէկ քաղորդ ժամ ապրեցանք ստորերկրային նկուղին մէջ՝ քսան տարիի տեւողութեամբ. նկուղին դրանք առջեւ ետեւի մը կար, կինձի վրայ յարձակող շուներու վտնակի մը խլացուցիչ ոռնումին պէս, այնքան մօտիկ մեր ականջին ու սրտին, որ կը կարծէինք թէ միայն նախախնամական կատակ մը թոյլ չէր տար որ տեսնեն մեր մարմինները ստառ, անշարժ: Կարելի՞ էր որ չնշմարէին նկուղին դուռը, նկուղ մը որ այդ մարդոց համար եթէ էութիւններ ալ չպարունակէր, գոնէ իրենց կողոպտողի ու աւերողի տեսնանքն յագեցընող իրեր կրնար թաքցնել:

Յետոյ յիղակարծօրէն աւուրեցաւ անհետացաւ այդ հեղեղը՝ միեւնոյն ուժգնութեամբ որ եկած ողորդած էր ամէն բան: Ստուգելի քրտինք մը որ կը ջրոտէր ամբողջ մարմինս, զգացուց ինձի թէ տակաւին կայրիմ. ու դաշոյնին պաղ կսթր կզգայի կարկամած մատնիբուս մէջ, անձնապահպանութեան տեսնող համակուած ոտքս մինչեւ զուլուս:

Ո՛հ, ալ ազատած էինք և իսկական հրաշքով մը. այն աստիճան համակերպած էինք ընդու պատուէրին որ զիրար մեռած կը կարծէինք սարսափէ. «ապատեցանք» կը փսփոսային իրարու ականջի, հողի, սիրտ տալով մէկգմէկու, այդ թանձր խաւարին մէջ ժպիտի աներեւոյթ լոյս մը ցոլացնելով: Հիմակ ալ անդին կը շարունակուէր աղէտքը, մոլեպին, միեւնոյն անխոնջ և անդուլ գործունէութեամբ, եկող անցնող ամպրոպի մը հեռաւոր թաւալումին հանգուակ:

Սակայն ի՞նչ բան կերաշխաւորէր մեզ թէ դարձեալ չպիտի պարուրուէինք միեւնոյն անաւոր դրացնութեամբ. ու խնդուքինս փորձերնս մնաց. շատ չանցած, ուրիշ տարափ մը պատասպարանին վրան ու շուրջը: Եթէ առաջին ջոլիբը կոյր եղաւ

ու չտեսնու մեր թագաւորը . այս երկրորդն ալ նոյն հաճոյակատաւ լուծիւնը պիտի ցուցունէր : Նկուզին դրանք առջեւ վերսկսու աւարտը , առաջին հոսանքին մնացորդներուն վրայ , բան գտնելով զեռ ջախջախելու , կործանելու . բայց . . . առանց զոչչելու մեր նուիրական ապաստարանին :

Իր ցազն հրեաները զինուած բլրերով ու լապտերներով , անկուշտ կը լափէին ինչ որ կար հայկական , գետնի հաւասարեցնելով պապենական դարաւոր հայ օջախներ : Այդ օրհասական լուսնիւնը մէջ , անգուպ ըմբոստում մը կը գաղտնի մերթի՛ հրէայէ կողմէն զարգացան զգալի քանակութիւններ : Բարձր , քիւրտէ , մարգկային ռեւէ արարածէ սպանուել կամ կործանուել վերջապէս անանկ գաղափար մըն է որուն հետ կրնաս հաշտուիլ ի հարկին . բայց երեւակայէ ան երկչտա , վաստգի , կեղծաւոր հրեաները սրոնք եկեր են տունդ տեղդ քանդելու , եզրայրդ , հայրդ կամ քեզ սպանելու : Ու կուզէի դուրս խոյանալ յանկարծօրէն , զաշտուել այդ հերոսներէն մէկ քանին . բայց երկիւղը , մանաւանդ հրեայէ սպանուելու դարձաւոր կը կեցուցէին զիս , եւ մտիկ կընէի մովսիսական գիւցազներգութեան այդ մեղեդին , գազանային կանչուը տուքներու ու բացազանչուներու անլուր խառնուրդ մը : Երկաթէ դրան վրայ մասներու թեթեւ թափելու մը ամէն մէկէն վեր ցատկեցուց : Վերջապա կը ամէն բան . ճանչցուած էր մեր գերեզմանը ուր յաւէտ թաղուած պիտի մտնէինք սասանակներդ հայրի՛ կին , տղայ , էրեկմարդ , անշուշտ հրէական գիւղերով շրջապատուած : Այդ հետաքրքրի մասները շուտ հետաքրքրի սակայն , անգամ մըն ալ չզոչչելու համար :

Մեր նկուզային կեանքի տեսողութեանը վրայ գաղափար չունէինք . քանի՞ ժամ մնացինք հող . քանի՞ անգամ խուժանը մտաւ ելաւ այդ տունը , քանի անգամ մտան տեսնաք կեանքի վճառմը կարմիր , արիւնտա : Վերջապէս եկաւ վայրկեան մը ուր ամէն բան գուլ եւ դադար առաւ : Ու այլ եւս մեր զըլխուն վրայ լսեցինք հեծիւններ , հասկըտուներ , շատուող քայլերու ընկերակցութեամբ՝ սրունք եկեղեցի կը դիմէին : Քիչ մը սիրտ առինք . փոթորիկը անցած ըլլալու էր : Անհանդուրժելի դարձած էր նկուզին միջնաբերդը : Պիտի ինքզնուէինք : Թեր ու գէժ վիճաբանութենէ մը ետք , միշտ ցած ձայնով , որոչեցինք բակին վրայ նայող պատուհանը կիսով բանալ : Այս գործողութիւնը կատարուեցաւ յետին աստիճան զգուշաւորութեամբ . ու փեղկի ծերպ մը՝ ճեղքուած գուրսի նորածագ լոյսին վրայ՝ մեր աչքին պարզեց աւերման ու քայքայման անեղի տեսարան մը :

ՇԱՐԺՈՒՄ

[Շարունակելի]

Ֆ Ի Լ Ի Պ Է

—)(—

(Մեր մասնաւոր քրոնիկոն)

Փ. Պօլիս , 12 Փետր .

Արդէն գրուած էր թերթերու մէջ թէ նախորդ հոգաբարձութեանց եւ թաղական խորհուրդներու յոռի մատակարարութեան պատճառով զըզրոցի շինութեան ժամանակ զբաւտակ գրուած ազգային կալուածները ցարդ ազատուած չէին : Ժողովուրդը

բաւական յուզուած էր այս մասին , վասն զի այս յոռի մատակարարութեան վարձանքը պիտի ըլլար կորուստը այս կալուածներուն : Միւս կողմէ հոգաբարձութիւն եւ թաղական խորհուրդներ այնպիսի անգատակարար զիրքի մը մէջ կը գտնուէին որ չէին կրնար հաւաքում կատարել : Ոչ ոք կը վստահէր անոնց : Ուստի զիմեցին քաղաքիս այն գաղափարին որ զարգացած ըլլալով հանդերձ նիւթական լաւ գիրք ունի : Թէեւ ամէն կերպով հակառակ ներկայ սնանկացած հոգաբարձութեան ուղղութեանը , զարգացած գաղափարը ուղիւղով անմիջապէս ազատել ազգային կալուածները , ընդունեց իր վրայ այդ գործը : Իրմէ կազմուեցաւ մասնախումբ մը զայն վերջացնելու համար : Որոշուեցաւ պարահանդէս մը կազմակերպել : Թէ ինչո՞ւ՝ չենք գիտեր : Հասանականօրէն ամենէն զիրարն եւ ամենէն շատ հասոյթ բերող ձեռնարկը նկատուեցաւ :

Հոս չեմ ուզեր նկարագրել այն խանդավառութիւնը որ տիրեց մեր հայ պառոճուա գաղափարներ մէջ երբ յայտարարուեցաւ այս որոշումը : Մասնաւոր Պոլսեցի տիկիներուն եւ օրիորդներուն ցնծութեան չափը չը կար : Անգիրն ծախքեր ըրին արդուզարդի համար : Բնակներուն բերանը բացուած էր : Բայց կարծ կապինք : Վերջապէս ըզձալի վայրկեանը հասաւ : Խումբ խումբ գիւմեցիներ հոն : Յիշեալ օրը մեծ գովեստներ կը լսուէին պարահանդէսին յաջողութեան համար : Ծնորակալ ենք որ հայ տիկիներն եւ օրիորդներ փայլած են օտար շրջանակներու մէջ իրենց ներքութեամբ եւ արդուզարդով , սակայն աւելի շնորհակալ պիտի ըլլանք թէ այդ տիկիներն եւ օրիորդներ փայլին ազգային շրջանակներու մէջ՝ հաստատելով ապաստարանները Հայաստանի մեր որբերուն համար կամ թէ պատրաստելով իրենց ձեռքերով հագուստներ Հայաստանի իրենց քոյրերուն մերկութիւնը ծածկելու համար :

Բայց խնդրին ամենէն հետաքրքրաշարժ երեւոյթը յետոյ կուգայ : Պարահանդէսէն զոչացած էր երկու հազար ֆրանքէ աւելի հասոյթ : Այս գումար բաւական էր գրաւել ազատուելու կալուածները : Մասնախումբը կը պատրաստուէր գործադրել իր գոյութեան նպատակը : Բայց սնանկացած հոգաբարձութիւնը որ մէկ քանի անգամներ հրաժարելէ յետոյ , նուրէն կուզէր գործի խառնուել , մինչեւ իսկ մասնախումբի անգամներուն տուները եւ վաճառատունները կերթայ դրամը պահանջելու համար , գաստուներու ամսականները վճարելու պատրուակով : Բայց մասնախումբը կը մերժէ ամէն ինչ եւ կը յայտարարէ թէ դրամը պիտի գործածուի իր ԲՈՒՆ նպատակին : Ասոր վրայ հոգաբարձութիւնը կը բերէ ինքիբը նորընտիր վարչական ժողովին առջեւ , բայց յառաջդիմական եւ ազատական սարբերէ բազկացած այս ժողովը չէր կրնար շեղիլ ճշմարտութենէ :

Կալուածները գրաւել ապաստելու ազգակիր պատրուակ էր : Բուն նպատակն էր տիրանալ առատ դրամներու : Կը լսենք թէ իրեն օգնութեան կանչեք է վարդապետ մը որ ճամբու գրուած էր երբեմն իր կողմէ : Թող գայ . յառաջդիմական սարբերանոր հետ ալ կուսկու պատրաստ է :

Շ Ո Ւ Մ Լ Ո Ւ

—)(—

Շումուէն նամակ մը ստացած ենք որ շատ տխուր գոյնի լով կը ներկայացնէ նոյն քաղաքին Տ. Խորէն քահանային ընթացքը :

«Այս քահանան ոչ Պատրիարքարանէն կը վախնայ , ոչ Թաղ. Խորհուրդէ եւ ոչ ալ ժողովորդէն կը քաշուի : Գինետուններէն դուրս չելլեր եւ Ս. Խորանին առջին գառնալով հայոյանք կը տեղալ գալիւններուն գլխուն :»

Թղթակիցը ամէնուն փափաքին արձագանգ հանդիսանալով , արդէն անգամ մը պաշտօնանկ եղած այդ քահանային վերջնականապէս հեռացումը կը խնդրէ ձեռնհաս մարմիններէ : Եւ կաւեցնէ որ «Եթէ այսպէս շարունակուի , ժողովուրդը կը սպառնայ իր զաւակներով Պուլկար եկեղեցիները յաճախել :» 0. Բ.

Հ Ա Ն Գ Է Ս Ի Ե Ր

—)(—

Վարդանանց տօնին առթիւ աւելի կամ նուազ փայլուն հանդէսներ տօնուած են Պուլկարիոյ ամէն հայաբնակ քաղաքներուն մէջ :

— Ռուսուզի հանդէսի մասին շատ գովեստով կը խօսուի մեզ զրկուած թղթակցութեան մը մէջ : Հանդէսը երկու մասերու բաժնուեր է . մէկը ցորեկը եւ միւսը . իրիկուան տեղի ունեցեր են դպրոցը , եւ մեծ խանդավառութիւն եւ գոհացում առաջ բերեր են ունկնդիրներուն մէջ : Վարժարանի երկսեռ ուսանողներն եւս իրենց գովարկի արտասանութիւններով մասնակցեր են հանդէսին :

Պ. Սապահ-Կիւլեան , վարժարաններու տնօրէնը , այս առթիւ ազգու խօսքերով դուրստեր է Ե. գարու հայութիւնը , որ գիտցած է քաջաբար կուռիլ գաղափարի մը իրականացման համար : Ա. Ս.

— Շումուէն եւս ասոնք է ազգային այդ անմոռանալի հանդէսը :

— Ֆիլիպէէ պատահական թըղթակից մը կը ծանուցանէ թէ այդ հանդէսը որ եղբայրական սիրոյ կապերը ալ աւելի ամրացընելու սահմանուած էր , տխուր միջադէպով մը վերջացեր է , աւանաբանութեան մը առթիւ ծագած բուռն վիճաբանութեան մը հետեւանքով , որ նոյն իսկ , կըսուի , ոստիկանութեան միջամտութիւնը հրաւիրեր է : Ս. Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

—)(—

Կ Ի Ե Տ Է

Կրեմէի խնդիրը , եթէ պտըտած տարածայնութիւնները ըստուգուին , կը պատրաստուի նո-

րանոր երեւոյթներու մէջ թեւակոխել : Առաջարկները այնքան հակասական են որ դժուարին է այժմէն որոշ գաղափար մը կազմել ապագային վրայ որ անշուշտ վերջի վերջոյ Կրեւասացոց նըպաստաւոր յաղթանակով պիտի վերջանայ : Սպասելով այդ ամենուս բաղձալի օրուան , առ այժմ մենք ալ ուզենք չուզենք պիտի արձագանգը դառնանք այն բուրդը զորոյցներուն որ զանազան տեղերէ կը ծագին ու կանհետանան ուրիշներու տեղ բանալու համար : Ահաւասիկ Պերլինէ . — պետութիւնները առաջարկեր են Անգլիոյ եւ Իտալիոյ որպէս զի Սահմանադրութիւն մը հաստատեն ի Կրեւտէ . բայց անոնք պիտի մերժեն ու միայն առժամեայ կառավարիչ մը պիտի կարգուի եղեր : Վիէնայէ . — Գերմանիա ձեռք առեր է Կրեւտէի խնդիրը : Վիէնէմի գրգռմով Սուլթանը Գերմանիոյ միջամտութիւնը հայցեր է . եւ կայսրը իր կողմէն պիտի առաջարկէ եղեր Եօրկիոս իշխանին թեկնածութիւնը : Կ. Պոլսէ . — Կրեւտէի ընդհ. կառավարչութիւնը առաջարկուեր է Պուլկարիոյ իշխանին եղբորորդի Վիթօլա Յարթօրիսքի իշխանին որ տակաւին վերջնական պատասխան մը չէ տուած

Չ Օ Լ Ա

Հռչակաւոր դատը վերջապէս աւարտեցաւ Զօլայի պարտութեամբ : Որոտընգոստ ծափահարութիւններու մէջ տեղ մեծ վիպագիրը մեծագոյն պատժին դատաւարուեցաւ , այսինքն՝ միւսամեայ բանտարկութեան եւ երեք հազար ֆրանք տուգանքի : Նոյնքան տուգանքի եւ քառամսեայ բանտարկութեան «Օռօռ» լրագրին տէր եւ տնօրէնը , որ հրատարակած էր ամբաստանագիրը : Թէեւ կըսուի որ Զօլա նախամեծար պիտի նկատէ ալ աւելի չի գրգռել հանրային կարծիքը եւ համակերպելով բանտի գաղափարին հոն երթալ աւարտելու իր նոր գիրքը , սակայն պատճառներ կան ենթադրելու որ գուցէ ճարտար փատարանի մը մէկ հարցումը վճուի բեկում առաջ բերէ եւ գարձեալ սկսուի հարկուրուր վկաներու թափորին անցքը նոր գաղափարութեան մը բովէն . փորձ մըն ալ բուն ճըլմարտութիւնը գտնելու , հիմնապէս լուծելով այդ յաւիտենական առեւտուածը :

Ա Ս Ս Ր Ի Ա

Այս բարեխոնական երկրին մէջ հանդարտութիւնը հեռի է տիրելէ : Մէկ կողմէն Հունգարիա ճնշում կը բանեցնէ իր իշխանութեան տակ գտնուող ազգերուն վրայ . Չեխերը եւ Գերմանացիները իրարու գլուխ կը պատուեն : Լէյպպիցէ առնուած վերջին լուրերը նոր կուսակցութեան նկարագրութիւնները կը բերեն մեզ : —)(—

Ի Ր Ա Տ Է

—)o(—

Սթամպոլտան կէլէն սօն խա-
պէրէրէ կէօրէ, Սուլթան ուզուն
վազըթտան պէրու վատ իթտիկի
Իրատէյի վէլհասըլ վէրմիշ տիր:
Հալ պու քի, իթէսիւպ օլունա-
ճագ պիր նօգթա վար իսէ, օ սա
իրատէնին վէ պիզիմ մահուտ
Օրմանեան Պատրիարքըն իսթէ-
տիյի միւսատէլէրին պէյնին-
տէ վագը օլան պէօյիւք, ամա
վէք պէօյիւք պիր մէսաֆէ տիր:
Պիզիմ Պատրիարք արզու իտէր
իտի քի գաղթականլար սէրպէսթ
Թիւրքիայա կիրսինլէր, էրմէ-
նիլէր Թիւրքիանըն պիր նօգ-
թատան օպիր նօգթայա կիրսին-
լէր, իքի սէնէ պէտէլաթը առ-
քէրիէ թահսիլ օլունմասըն, պիր
տէֆա իշին Սուլթան 100 պին
լիրա էրմէնիլէրէ վէրսին, մէք-
թէպլէր աչըլուն, վէ որբլար
պագըլսըն:

Իմտի, Պատրիարքըն պու թա-
լէպլէրինէ ճէվապէն, իշտիլ-
տիկինէ կէօրէ, չըգան իրատէ
եալընըլ միւթէպէր էրմէնիլէ-
րին Պատրիարքարան քէֆալէթի
թահթընտա Սթամպոլա կիրէ-
պիլմէլէրինի միւսատէ իտէր
վէ Թօիհանէտէքի մէճլիս որբ-
լարըն հալինէ կէօյա պիր մէտար
օլմայա չալըչաճագ տըր:

Վէ էվրորասա պինլէրճէ միլ-
լէթտաչլարմըլըն ուզուն միւսա-
տէթտէն պէրու պէքլէտիքլէրի
իշթէ պու գատար ուֆագ պիր
միւսատէտէն իպարէթ տիր:

Էօթէտէն պէրու պիզիմ էֆ-
քեարմըլ շու օլմուշ տըր քի,
Սուլթան էրմէնիլէրէ գաթի պիր
էյիլքտէ պուլունմայաճագ տըր,
վէ հաթթա Պատրիարքարանըն
քէֆալէթի թահթընտա թէլքէ-
րէլի գաղթականլարըն Սթամպո-
լա գապուլ օլունմասը պիլէ չօգ
սու գալտըրըր:

Օրմանեան Պատրիարքըն մէ-
մուրիլէթ պաշընա կէչալիյի
կիրնտէն պէրու հիշ թէէսիլլի
վէ միլլէթէ ֆայտէլի պիր իշինի
կէօրէմէտիկիմիլտէն վէ պիրին-
ճի Մէճիտիլէ նիշանընը ալմագ
իշին սայ ու զայրէթտէն մա: ա
հիշ պիր շէճաթտա պուլունմա-
տըլընտան, պէօյլէ պիր ստա-
մըն Պատրիարքըն թիւն սանտալ-
եասընա օթուրմայա տէվամ իթ-
տիկինի թէէսիլլի օլունուր:

ԲՕԼԻԹԻԳԱ

—)o(—

ԵՌՈՒՆԱՆԻՍԹԱՆ

Իսթիգրազ մուամէլէսի խի-
թամ պուլմուշ տըր: Բուսիանըն,
Փրանսանըն վէ Ինկիլիթէրանըն
քէֆալէթի թահթընտա 5 միլլեօն
լիրա իգրազ իտէն (փոխ տալ)
սէնտիգ 25 պին ֆրանք տախի
քէֆալէթ իսթիգրազըն վէրէ-
ճէք իմիշ: Իսթիգրազըն գալան
զըսմը քի 165 միլլեօն ֆրանքա

Исчт. Войниково Варна.

պալիզ տիր, Բուս պանգալար
թարաֆընտան գարանճագ տըր:

ԱՄԵՐԻԳԱ ՎԷ ՍՊԱՆԻԱ

Պունտան էվվէլ եազմըլ ըտըզ
քի Ամէրիգանըն «Մէյլ» նամ
զըչըլըր Բուսայա կիտէր իքէն
պիրտէն պիրէ բաթլայըլ պաթ-
մըլ վէ իշինտէ պուլունման իքի-
եիւզտէն զիլթաթ թայֆալար թէ-
լէֆ օլմուշար ըտը: Եիմտի,
«Մէյն»ին գուամանտանըն սէօյ-
լէտիկինէ կէօրէ կէօյա պու գա-
զա քէնտիլիկինտէն իլէրու կէլ-
մէյիպ տըլարտան պիր տիւշ-
մանըլ սէմէրէսի տիր, եանի
Սպանիա տինամիլթ իլէ «Մէյն»ի
պաթըրմըլ տըր: շին սալը շու-
տըր քի պիր սէպլ պարանըլըյօր
Սպանիա վէ Ամերիգա պէյնինտէ
պիր մուհարէպէ հուսուլա կէթիւր-
մէք իշին:

ՊՈՒԼԿԱՐԻԱ ՎԷ ԱՒՍՏՐԻԱ

Բուս կաղէթալարըն պէյանը-
նա կէօրէ, Բրէնս Ֆէրտինանտ
հաչըթթէրի Բուսիա Չարընա
վէրէճէյի զիլթաթտէ քէնտի-
սինին Աստրիա իմքէրաթօրը
իլէ պարըլտըրմասընա մէտար
օլմասընը թէքլիթի լաէճէք իմիշ:
Պու հապատիս քէք էսասըլ կէօ-
րինմէյօր, շինն Բուսիա հէր
հալտէ Պուլկարիա վէ Աստրիա
պէյնինտէ պիր եազընըլգ սալա
արզու իթմէլ:

ԳՐԱԼ ԵՌԻԿԻՈՍԱ ՀԻՆՃԻԻՄ

Գրալ Երրկիոս Բրէնսէս Մառի
իլէ ճուամ էրթէսի կիրնիւ սաաթ
տօգուպա Փալէրտէն տէօնտիւ-
կիւ էնանտէ պիր շուգուրտա
սագլանմըլ իքի ստամ քէնտի ա-
րապալարընա իքի էլ գուրշուն
սըզմըլար տըր: Պիրինճի գուր-
շուն իսապէթ իթմէմիշ իսէ տէ,
իքինճի գուրշուն գրալըն սէյի-
սինի գօլունտան եարալամըլ
տըր: Արապա աճէլէթէն կէչիպ
կիտէր իքէն, եէտի տէֆա տա-
խի գուրշուն պօշանմըլ, լաքին
արապա սալ սէլիմ սէրայա եէ-
թիշմիշ տիր:

Գաթիլլէր ֆիրար իթմիշլէր
իսէ տէ, գրալ անլէրի չափուգ
թանըլաճագընը պէյան իթմիշ
տիր:

ԹԻԻՐԲ ՕՐՏՈՒՄԸ

Սթանպոլտան խապէր վէրիլ-
տիկինէ կէօրէ, Եըլտըլաքի
հարպիլէ գօմիսիօնը պու սըրա-
սա էրզըրու Բուս հուսուլընտա
Թիւրք օրտուսընըն լալըմ կէլ-
տիկի անտէ ճէմ օլունմասընա
տայիր պիր բլանըն իճըրսընը
թէտգիգ (քննել) իթմէքաթ տիր:

Չ Ի Ն

Չին հիւքիւմէթի քէնտի պիւ-
թիւն չայլարընըն էվրօբա թի-
ճարէթի իշին աչըլ օլտըլընը
րէմէն իլան իթմիշ տիր:

—Բէքիտէն «Թայմիզ»ա եա-
զըլտըլընա կէօրէ ճարսն հիւ-

քիւմէթի գըլ մէվսիմիտէն
սօնրա Բորգ-Արթիւրին Բուսիա
թարաֆընտան թէրք օլընաճա-
զընա տայիր թէմինաթ (պապ-
հուլութիւն) իսթէտիկինտէ, շին
հիւքիւմէթի Բուսիայա միւրա-
ճաաթ իթմիշ. Բուսիա իսէ էվ-
վէլա տիւշինտիկինտէն ոահա
ուչուն վագըթ Բորգ-Արթուրտա
գալաճագընը վէ քէնտիսինին
կէրի շէքիւմէսի Չին հիւքիւմէ-
թիւնին էնթէրէսինէ գարշը օլա-
ճալընը պէյան իթմիշ տիր: Չին
Բուսիանըն պու պէյանը տախի
պիր զապթ օլտըլընը անլամըլ
տըր:

— Հոնկ-Քոնկտան կէլէն հա-
պէրէր րուս տօնանմասընըն ա-
ճէլէթէն հալըրլանըլ օրայա
վասըլ օլմասընը պիլտիրիյօր-
լար:

ԷՏՉԻՄ ՓԱՃԱ

Սուլթան Թեսալիատաքի թիւրք
օրտուսընըն պիրինճի գօման-
տանը էտհէմ փաչայա Սիլիպէ
կիտիպ օրտաա ճէմ օլունան
թիւրք սաքէրլէրին գօմանտա-
սընը էլէ ալարագ Գօսոլա սերպ
վէ պուլկար էհալիլէ հի: ճիւմ ի-
տէն Ալպանիալըլարը զապթ իթ-
մէյի էմը իթմիշ տիր:

Սօն հապատիսթա նաղարէն,
էտհէմ փաչա՝ Սէլանիկ վէ Մա-
նասթըր մուսթաֆըլ սաքէրլէր-
տէն ալտըլը եէնի գուլթէթլէր
իլէ Սիլիպէ եէթիւմիշ օլմալը
տըր:

ԳՐԱԼ ՄԻԼԱՆ

Գրալ Միլանըն Սերպիայա ալ-
տէթիլի միւտաֆաա իթմէք մագ-
սէ: ի իլէ գրալ Ալէքսանտըն
Բուսիա Չարը ՚իգօլա հաչըթթ-
լէրինէ պիր զիլթաթ իթմէք ի-
շին իթտիկի թէքլիթի գապուլ
օլընմամըլ տըր, զիրա գրալ
Միլան էվվէլքի Չար Ալէքսանտը-
րա՝ Սերպիայա կիրմէյէճէյինի
սէօլ վէրմիշ իմիշ:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Բուս տօնանմասը պու սօն պա-
հարտա Պալթիւք տէնիլիտէն մա-
նօլրալար իճըրա իտէճէք վէ Չար
տախի հալըր պուլունաճագ տըր:

— Քէօսթէնճէ վէ Սթամպոլ
արասընտա իշլէյէն Ռուման
գուլմանեասընըն «Մէտօր» վա-
փօրը կէչէն կիւնքի: Իւման սէ-
պէպի իլէ Գալաուսա եազընլա-
րընտա թաչլարա օթուրմուշ վէ
պիր Փրանսըլ գարըսը, թիւրք
աթէշճի վէ պիր տէ խըլմէթճի
թէլէֆ օլմուշար տըր: Գալան
եօլճուլար արապա իլէ Քէօսթէն-
ճէյէ կէթիւրիւլիւպ, բօսթա վէ
մալլար «Տօլրուճա» վափօրընա
նալլ օլունմըլլար տըր:

—)o(—

Թ Ա Տ Ր Ո Ն

Յառաջիկայ շաբաթ գիշեր
Պապանան-Պէնլեան թատերա-
խումբը Սլավօֆի սրահին մէջ
պիտի ներկայացունէ յոյժ հե-
տաքըրաչարթ թատերախաղ մը,
«Աչխարհիա շըլանը 80 օրուան
մէջ» օրուն պատրաստութեամբ
կըրաղէր խումբը երկար առննէ
ի վեր:

Կարժէ տեսնել:

ՊՕՐՍԱ

Վառնա 18 ֆէսրուար

ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լիպրա 47—51, հէքթօլ.
8.50—9.30 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ.
9—11 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 4.20—4.50
ֆրանք

ՄԸՍԸՐ
Վազօն, լիպրա 37—38 հէքթօլ.
5.90—6 ֆրանք
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ.
6—6.20 ֆրանք

ՅԱՍՈՒՎԵՍ
100 օգգասը 19—24 ֆրանք մալա
կէօրէ
Ամապա մուամէլէսի նարօլէն 21
ֆրանք հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 2—3 վազօն վէ 7—8 ա-
րապա պուլտայ, 10—15 արապա ար-
բա, 4—5 վազօն վէ 10—15 արապա
մըսըր կէլմէքաթ տիր:

ՏՊԱՐԱՆ «ՆԱՐԺՈՒՄ»Ի

—)o(—

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցետոմս, նամա-
կազուլա, հարսանեկան հրաւի-
րագիր, մահալղ, ինչպէս նաև
պրօշիւռնիք:

Գիներն յոյժ գիւրամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած
յանճնարարութիւններ ճշգու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալա, թահմիզ կէղիպէօյիւքիանի
խանութը, Սասուն սրճարանի ծխա-
վաճառին քով և Ապսիւրրանման
մզկիթին դէմը հայկական գրատու-
նը, Ա. Չարբանէլիանի քով:

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆՈՒՅՄ

Ա.ՉԳ.ՆՅԻՆ ԵՒ ՉԱԼԵՆՏԱԿԱՆ
—)o(—
Խոլքազիր Տնօրէն
ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱՉԵԱՆ

Սոյն երգիծարանական հան-
գէսը, որ տարիէ մը ի վեր շա-
բաթը մէկ անգամ կը հրատա-
րակուի Վառնայի մէջ, բաւա-
կան հաճելի եղած է իր ընթեր-
ցողնեան:

Տարեկան բաժանորդագրինն է
Պուլկարիոյ համար 10 ֆր. վե-
ցամսեան 5 ֆր. արտասահմանի
համար տարեկան 12 ֆր. վեցամ-
սեան 5 ֆրանք:

—)o(—

Отговорникъ: X. Тахмисянъ.